ռազմի մը՝ տեղւոյս Կառավարչին Պոլիս երթալ կը հրամայէր. Նորին վսեմութիւն տեղւոյս Դատաւորը փոխանորդ կարգելով, ամսոյս 3ին Յուլիսէ՝ և 4ին Աւրատրխանն շոգենաւով դէպ 'ի Պոլիս մեկնեցաւ Պերութի ճանապարհաւ։ 6ին Պերութ հասնելով, կրկին հեռագիր մը կ'ընդունի, որով ետ դառնալ կը հրամայուէր. ուստի Վսեմ. Կառավարիչը իր պաշտօնատեղին դարձաւ ցամաքային ճանապարհորդութեամբ։ Այն միջոցին Ադրի (Ադըրնա) հանդիպելով հանդուցեալ Ապտալլահ փաշայի դստեր հետ 16ին քաղաքս հասաւ, և 22ին գիշերը նոյն օրիորդին հետ ամուսնացաւ։

— Ամսոյս 18ին այս տեղէն մեկնեցաւ Գաղղիոյ Հիւպատոս պարոն Էրնէսթ Գրամբօնը վեց ամիս յԵւրոպա ճանապարհորդելու նպատակաւ. իրեն փոխանորդ կարգուեցաւ Պ. Մաթրիմոնի, որն որ յատուկ այս գործոյն համար հոս եկած էր։

— Բաւական ժամանակէ 'ի վեր արդէն կը լսուէր թէ Ուռհայի ջուրերն հետզհետէ սկսեր են նուազիլ. այժմ կ'իմանամք թէ նոյն քաղաքի մօտ գտնուած երկու մեծ աղբիւրներն (որոց մին Տիրէ-ըէ կ'անուանի և միւսն Սէ-ըէ-ման ֆը-նարը) բոլորովին ցամաքեր են, որով նոյն աղբերց առջեւ գտնուած պարտէզներն ամայացեր են իսպառ. Նոյնպէս ալ քաղաքին մէջէն բղխեալ երկու մեծամեծ և ձկնալի աղբիւրներն, որոց մին կ'անուանի Հալիլ Աբրահամ աղբիւր և միւսն Հանզըլէ, բաւական նուազեր են եղեր. նոյնպէս ալ քաղաքէն մէկ ժամու հեռաւորութեամբ Կարմուճ անուանով Հայու գիւղի մը մէջ գտնուած երկու աղբիւրներն խիստ նուազած լինելով տեղւոյն ժողովուրդք կը նեղուին։ Այն ջուրց նուազելուն պատճառ կը սրուի երկար ատենէ 'ի վեր ձեան պակասութիւնը. քանզի առաջ ամեն տարի շատ ձիւն կու գայ եղեր Ուռհայի շրջակայները։

# ՑՈՒՑԱԿ ԳՐՈՑ

( Շարունակութիւն և վերջ. տես թիւ 9.)

Դրշ. | Փրյ.

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ. գործ Նախնեաց ԺԲ դարու. Տպ. 1869. Ժամանակագրական Պատմութիւն, որ կ'սկսի 951 թուականէն և կը հասնի մինչև 1162 թուականը կը պատմէ 210 տարուան մէջ տեղի ունեցած անցքեր. իբրև յառաջ եղած յիշատակարաններէն քաղելով և մանաւանդ իւր ժամանակ պատահած անցքերը. Հայրենասիրական զգացմամբ լեցուն և սրտաշարժ կերպիւ կը խօսի Հայրենեաց կրած տառապանաց և նահատակութեանց վրայ . . . . 14

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՓԵՍԱՑԻՈՑ. յօրին. Պետրոս Ա. Եպիսկոպոսէ Աղամալեան Բերդումեանց, Տպ. 1850. Պօղոս Ս. Առաքելոյն առ Եփեսացիս գրած թղթոյ մեկնութիւնն է պարզ և լուսաւոր ոճով . . . 25

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ. Ներսիսի Լամբրոնացւոյ. Տպ. 1855. Ս. Յովհաննէս Աւետարանչի Յայտնութեան գրքին մեկնութիւնն է, զոր յոյն բնագրէ թարգմանած է Ս. Ներսէս Լամբրոնացին . . 10

ՄԻԽԱՅԵԼԻ ԱՍՈՐՒՈՅ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. գործ ԺԲ դար. Տպ. 1871. ուր բաց 'ի ժամանակագրական պատմութենէն բովանդակած է նաև զանազան ազգաց գաւազանագրերը, նոյնպէս և Հայոց կաթողիկոսաց շարունակութիւնը մինչև ց'Ներսէս Շնորհալի. . . . . . 16

— Նոյնը՝ ուրիշ գրչագրով բաղդատուած փոքր ինչ տարբերութեամբ առաջինէն, Տպ. 1870. . . . . 12

## Յ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ. գործ Նախնեաց Թ. դարու, Բ. Տպ. 1869. Այս հատընտիր պատմութիւնը աշխարհի ստեղծումէն կ'սկսի, և համառօտելով մինչև իւր ժամանակը կը հասնի. իսկ իրեն ժամանակակից դէպքերը կը պատմէ մանրամասն և խիստ սրտառուչ կերպիւ բարդուած ոճով և լի եռանդեամբ. որ այս երկրորդ անգամ՝ ձեռագրաց հետ նորէն բաղդատուած և գլուխներու բաժնուած է. 10

ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ. վիպասանութիւն մաքուր գրաբար լեզուաւ. Հեղինակութիւն Ս. Աթոռոյս բազմարդիւն միաբան Տէր Խաչակ Ծ. Վ. Տ. Գրիգորեան գաղատացի. Տպ. 1849. այն գիրքը 60 գիշերի բաժնուած է, յորս Յովսէփ իւր Ասանէթ ամուսնոյն հետ խօսելով կը հրահանգէ զայն յաստուածպաշտ-

digitised by A.R.A.R.@

տութիւն և ՚ի բարոյականութիւն . ընտիր են իւր բարոյական սկզբունքները . . . 10

## Ն

ՆԱՐԵԿ . ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ Ս . ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ . Նախնեաց գործ ժ . դարու . Տպ . 1868 . Հոյակապ վսեմ և իմաստալից ոճով գրուած հաւատոյ հեղինակութիւն, բովանդակութիւնն է ամէն տեսակ խորգրուածքներու և սրտառուչ մաղթանքներու . 12

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ . աշխատ . Ս . Պ . Պ . Փափազեանց . Տպ . 1868 . բարոյական և քրիստոնէական խրատներով, քաղաքավարութեան կանոններով, փոքրիկ պատմութիւններով և գեղեցիկ առակներով պատրաստուած է նոր կարդալ սորվող տղայոց համար, որով մանուկը զբօսնլով, կրթուելով և օգուտներ քաղելով կը սորվի կարդալը . . . 5

## Ո

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ . հեղինակութիւն Սարգիս Մ . Վանանդեցւոյ . Տպ . 1865 . Հայաստանի բարերար Մեծն Ներսէսի մահուան վրայ չորս արարուածով յօրինուած Ողբերգութիւն աշխարհիկ լեզուաւ . 4

ՈՒԽՏ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ . Գաբրիէլ Մուրատեանցի . Տպ . 1868 . Հայրենասիրութեան վրայ խօսուած գեղեցիկ ճառ մի է, զգայուն սրտէ բղխած . աշխարհաբար սահուն ոճով (**) 1

ՈՒՍՈՒՄՆ ԲԱՐՈՒՑ . գործ Փրանկիսկոսի Սալէզի Թարգմանեալ Լատինականէն ը-ւէ Պ . Յովհաննէս Տ . Կարապետեան Ռամկաբար լեզուաւ . Տպ . 1857 . Մարդուս բարոյական ուղղութիւնը սորվեցնող խրատական ոճով գրուած գիրք մի է, երեք մասի բաժնուած . առաջնոյն մէջ կուսուցանէ մարդուս իւր անձին ունեցած պարտքը . երկրորդին մէջ առ ընկերն, և երրորդին մէջ առ Աստուած, որք հիմն են ընդհանուր բարոյականութեան (*) . . . . . 18

ՈՒՍՈՒՄՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ . Թարգմանութիւն Գոնդիլլակէ . Մեկնեալ Պ . Պ . Փափազեանց . Տպ . 1860 . Տրամաբանութեան կանոնները համառօտ և պարզ ոճով աւանդող դասագիրք աշխարհաբար . . 5

## Պ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս . ԳՐՈՑ . երկասիրութիւն Պ . Եղիա Տէմէճեանի . Տպ . 1867 . Հին և Նոր Կտակարանի պատմութիւն, համառօտ և դասական ոճով աշխարհաբար լեզուաւ Ազգային դպրոցաց համար գրուած . 8

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ . աշխատասիրութիւն Մելքիսեդեկ Վ . Մուրատեանի, երկրորդ Տպ . 1872 . Սուրբ Աւետարանի ուսման համար պատմական կարգաւ և դասական ոճով իւրաքանչիւր պատմութեան մէջը բարոյական յորդորականներ աւելցնելով պատրաստուած է Ազգային դպրոցաց համար . 7

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս . ԵՐՈՒՍԱՂԷՄԻ . քաղուածոյ թարգմանութեամբ . Տպ . 1872 . Ուխտաւորաց և ճանապարհորդաց Սուրբ Տեղերը շրջելու դիւրութեան համար պէտք եղած տեղեկութիւնները կը պարունակէ, և նոցա ձեռքը առաջնորդ մի է . . . 5

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ . աշխատասիրեաց Ս . Աթոռոյս միաբան Խորէն վարդապետ, սպառած (**) . . . 8

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս . ԼՈՒՍԱՒՈՐՉԻ . Տպ . 1867 . Մեր քաղցրախօս Հօր Ս . Գրիգոր Լուսաւորչի անուանելի չարչարանաց պատմութիւնն է հայերէն գրով տաճկերէն լեզուաւ . . . . . . 4

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ . Ս . Պ . Պ . Փափազեանցի, Դ . Տպ . 1870 . դպրոցաց մէջ ազգային պատմութիւն ուսուցանելու համար աշխարհաբար լեզուաւ դասագիրք . . 6

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ . գրաբարէ թարգմանութի աշակերտաց . Տպ . 1872 . Մանկանց դաստիարակութեան և բարոյական կրթութեան համար խիստ յարմար և ընտիր պատմութիւններ և գեղեցիկ ու ազդու խրատական յորդորականներ կը պարունակէ մաքուր աշխարհաբար . . . . . 7

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս . ԵԿԵՂԵՑԻՈՅ ՚ի Մելքիսեդեկ Վ . Մուրատեան յառաջելական ուխտէ Ս . Յակոբեանց . Տպ . 1872 . Հայաստանեայց առաքելական ուղղափառ սուրբ Եկեղեցւոյ սկզբնաւորութենէն մինչև 1867 թուականը կը հասցնէ Պատմութիւնը . առոյգ և հաւատարիմ աղբիւրներէ քաղուած, դասական ոճով կարգադրուած, կը բովանդակէ իւրաքանչիւր դարու մէջ Եկեղեցւոյ կրած դառնակսկիծ տառապանաց, հալածանաց, ուղղափառ հաւատքն անփոփոխ և անկորուստ պահելու համար արիական նահատակութեանց և ընդ նմին ազգային քաղաքական նշանաւոր անցից և գրական վաստակոց պատմութիւնը, ազգային դպրոցաց համար . . . . 16

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿԱՄԵԱՅ ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ Ի ՀԱՊԷՇՍՏԱՆ . գրեց Տիմոթէոս Ծ . Վ . Սափրիչեան Պօլսեցի . Տպ . 1871 . Գեր . Տ . Իսահակ Արքեպիսկոպոսի և Տիմոթէոս վարդապետի Հապէշստան ըրած ճանապարհորդութեան Պատմութիւնն է, որ կը բովանդակէ թէ նոցա կրած տառապանքները, թէ Հապէշից վարքն ու բարքը և թէ նոցա կրօնական և քաղաքական կեանքը . . . 20

— Նոյնը Գաղղիարէն լեզուաւ . . 20

digitised by A.R.A.R.@

Ղրշ. Փար.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԵՆԿ ԹԻՄՈՒՐԱՅ. Թարգմանեալ 'ի տաճիկ բնագրէ յաշխարհիկ լեզու յաւելեալ ծանօթութիւնս Աստուածատուր վարդապետ տէր Յովհաննէսեանց, յառաջնորդական ուխտէ սրբոց Յակոբեանց 1873. ուր կը պատմուի Թիմուրայ ծնունդն և առաջին ծագումն, բախտական արշաւանքն և պատերազմն յողն և այլ կողմանս աշխարհի. ազգաց և ազանց կոտորումն. Թագաւորաց և իշխանաց բնաջինջ բարձումն. Հայաստանի և Վրաստանի աւերածը. և անոր բազմութեամբ գերեալ, յետոյ առաջօք և մեծագանձ ձոխութեամբ գերեալն 'ի Սմրղանտ. և այլ արարմունքն և մահը։ Ցաւալի պատմութեանս համառօտ ծանուցմանն կը յիշատակուին յաջորդք, որդիք և թոռունք Թիմուրայ, մինչև 'ի բարձումն Թագաւորութեան 'ի Թիմուրեան ցեղէ յՕզպէկ Թաթարաց. Թղթակազմ . . . 10

— Նոյնը կիսակազմ . . . 12

## Ս

ՍԱՂՄՈՍ ԽՈՀՈՐԴԻՐ, այլ և այլ անգամ տպուած . . . . . 10

— Նոյնը՝ մեծ գիրով . . . 6

— Նոյնը՝ միջակ դպրոցներու համար, Տպ. 1873 . . . . 6

— Նոյնը՝ փոքր գիրով և մանր գրով. 5

ՍԻՈՆ ՕՐԱԳԻՐ. կազմեալ 1866էն մինչև 1872. աշխարհիկ լեզուաւ Ազգային, Բանասիրական և Գրագիտական նիւթոց վրայ կը խօսի, որ ամիսը 24 երեսէ բաղկացեալ տետր մի կ'ընդունին բաժանորդք, որոյ սկզբնաւորութիւնն է 1866 թիւէն, և մինչ ցարդ կը շարունակի. տարեկան գինն է օտար երկիրներու համար կանխիկ վճարելի ձամբու ծախքովն հանդերձ երկու արծաթ մէճիտ . . 40

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ. գրեց Մկրտիչ Վ. Աղծրունի միաբան Ս. Աթոռոյս Երուսաղէմի. Տպ. 1859. Սուրբ Երուսաղէմի Պատմութիւնն է (**). . . 4

## Վ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՓՈԽԱՏԱՑ ՄԱՆԿԱՆՑ. Տպ. 1868. Եկեղեցւոյ մէջ կարդացուած փոխերու քարոզներու և մաղթանքներու բովանդակութիւնն է փոխ բռնող տղայոց դիւրութեան համար . . . 6

## Տ

ՏԱՆՎԻՑԼ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ. Ծոռ յաղագս հնոյն Երուսաղէմի և Տաճարին Սողոմոնի. Թարգմանեալ 'ի Գաղղիարէնէ աշխատասիրութեամբ Յովհաննու Տ. Կարապետեան Պօլսեցւոյ. Տպ. 1855 (*) . 5

ՏԱՐԵՐՔ ԽՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ. Թարգմանեալ յիտալական լեզուէ 'ի Հայ, Գաբրիէլ Գէորգեան փօթիշանցի դպիր Սաղիմայ, Տպ. 1852 (*) . . . . 6

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ. Իտալերէնէ պարզ գրաբարի թարգմանած է Պ. Յովհաննէս Տ. Կարապետեան Պօլսեցի. Տպ. 1856. բարուց զեղծմանց և զանազան մոլութեանց վրայ խօսուած համառօտ քարոզներ են (*) . . . . . . 8

ՏՈՄԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ. Պօղոսի Գրիգորի Փէշտիմալճեան. Տպ. 1855. Տոմարաբանութեան ուսումը պարզ և դիւրիմաց ոճով գրաբար լեզուաւ աւանդող դասագիրք (*) . 13

ՏՕՆԱՑՈՅՑ. Տպ. 1868. Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ կատարած տօներուն և եկեղեցական արարողութեանց կարգերն ու օրերը ցոյց կուտայ, հանդերձ բուն տոմարաւ. 10

## Ք

ՔԵՐԱԿԱՆ. հին ոճով. Տպ. 1872. փոքրիկ տղայոց կարդալ սորվելու համար . . 20

ՔԵՐԱԿԱՆ ԳԱՂՂԻԱՐԵՆ ԼԵԶՈՒԻ. յօրինեալ յաշակերտաց Քաւանդացւորաց վարժարանիս. Տպ. 1871. Գաղղիարէն կարդալ սորվելու համար համառօտ և դիւրին ոճով կարգադրուած . . . 2 20

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Հայերէն լեզուի, գր. Կիւրեղ Վ. Սրապեան. Տպ. 1870 . . 4

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Գաղղիարէն լեզուի, հայերէն բացատրութեամբ. Աշխատ. Եղիազար Մուրատեան. Տպ. 1869 . . 3

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ. հայերէն և տաճկերէն լեզուաւ. Տպ. 1870 . . 2

## Օ

ՕՐԱՑՈՅՑ. և զուարճութիւնք օրոց. աւելցած է նաև Ճաշոց ամսաթիւերը, և եկեղեցական պաշտօնէից դիւրութեան համար, իւրաքանչիւր աւուր շարականները հանդերձ ձայներով դրուած են, որով Տօնացոյցի պաշտօնն ալ կը կատարէ մանաւանդ . . 1

digitised by A.R.A.R.@